

Հաստատված է  
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի  
«3» մայիսի 2017 թ. թիվ 109 նիստում  
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն  
Ս. Սարգսյան



**Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ  
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԿԱՊԵՐԻ**

Երևան 2017

## 1. Ընդհանուր դրույթներ

- .1. Սույն հայեցակարգը սահմանում է ԳԿՄԿ հանրային կապերի համագործակցության ուղղվածությունը՝ ԶԼՄ-ների, ՀԿ-ների, պոստենցիալ գործատուների, զբաղվածության կենտրոնների և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ կապերի հաստատման, խորհրդատվության, տեղեկատվության փոխանակման և համագործակցության գործընթացը:
- .2. Սույն հայեցակարգը գործում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան, ԳԿՄԿ Կանոնադրության և սույն հայեցակարգի դրույթների հիման վրա:
- .3. Հայեցակարգը կարող է լրացվել կամ փոփոխվել ԳԿՄԿ գիտական խորհրդի որոշմամբ:

## 2 Խնդիրներն ու գործառույթները

ԳԿՄԿ-ի՝ հասարակայնության հետ տարվող աշխատանքների և գործունեության համակարգումը իրականացվում է հետևյալ խնդիրների ներառմամբ.

- a. ԶԼՄ-ների, ՀԿ-ների և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ խորհրդակցությունների, բանակցությունների, տեղեկատվության փոխանակման պլանավորում, կազմակերպում և վերահսկում:
- b. ԶԼՄ-ներով կրթության և գիտության ոլորտի կարևոր խնդիրների վերաբերյալ հրապարակված նյութերի վերլուծություն, այդ նյութերի տեղայնացում ու համապատասխան ընթացքի ապահովում (նյութերի ներկայացում ԳԿՄԿ-ի ղեկավարությանը համապատասխան մասնագիտական ամբիոնների եզրակացության հիման վրա):
- c. ԳԿՄԿ հասարակական կարծիքի և դրական վարկանիշի ձևավորման ուղղությամբ աշխատանքների կատարում՝ Կենտրոնի ընթացակարգերի, աշխատառճի, ներքին կարգապահական կանոնների և այլ խնդիրների ուղղությամբ մեթոդական ուղեցույցների մշակում, ներդրում և այլ աշխատանքների կատարում:
- d. Քաղաքացիների ընդունելության, օրենքով սահմանված կարգով նրանց հարցերի, առաջարկությունների, դիմումների, բողոքների և նամակների քննարկման ուղղությամբ մեթոդական աջակցություն:
- e. ԳԿՄԿ տեղեկատվության տպագիր միջոցների՝ պաշտոնաթերթերի, տեղեկատվական թերթիկների, բուլլետենների, բացիկների և այլ նյութերի տարածում և զարգացում:

- f. Ինտերնետային կայքի բարելավում և ապահովում՝ պարբերաբար թարմացումներով և առցանց հետադարձ կապի ապահովմամբ;
- g. ԳԿՄԿ գործունեության մասին համապատասխան տեսանյութերի և աուդիոնյութերի պատրաստում և տարածում.
- h. ՀՀ օրենսդրության, ԳԿՄԿ Կանոնադրության և սույն հայեցակարգի դրույթներից բխող այլ գործառույթների իրականացում:

### **3 Հանրային կապերի ոլորտի գործառույթները**

Հանրային կապերի ոլորտում գործառույթներն իրենց իրավասությունների շրջանակներում իրականացնում են ԳԿՄԿ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինը, կրթության որակի ապահովման բաժինը, արտաքին կապերի բաժինը և շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի բաժինը:

3.1. *Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինը* իրականացնում է տեղեկատվական միջոցների սպասարկման և կառավարման աշխատանքները, մասնավորապես՝ համացանցի միջոցով տեղեկատվության տարածումը և առցանց հետադարձ կապի ապահովումը, ինչպես նաև ԳԿՄԿ ուսումնառության գործընթացի մասին նյութերի և նորությունների տեղադրումն ու տարածումը:

3.2. *Կրթության որակի ապահովման բաժնի* հանրային կապերի ոլորտին առնչվող գործառույթներն են՝ հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության տարածմանը վերաբերող հարցերի նախապատրաստումը և ներկայացումը ԳԿՄԿ գիտական խորհրդում, ԶԼՄ-ների, ՀԿ-ների և այլ կազմակերպությունների հետ տեղեկատվության փոխանակումն ու համագործակցությունը:

3.3. *Շրջանավարտների միության բաժինը* հանրության հետ կապերի համագործակցության ոլորտում կազմակերպում է տարբեր ցուցահանդեսներ, սեմինարներ, գիտաժողովներ, մասնավորապես՝ «Կարիերայի օր», «Աշխատանքային տոնավաճառ» պոտենցիալ գործատուների հետ հանդիպումներ, ինչպես նաև էքսկուրսիաներ, փոխայցեր և այլ միջոցառումներ:

3.4. *Արտաքին կապերի բաժինը* իր իրավասության շրջանակներում՝ ԳԿՄԿ համապատասխան ամբիոնների վարիչների երաշխավորությամբ միջազգային գիտակրթական պայմանագրերի կողմ հանդիսացող համալսարանների և գիտական կենտրոնների հետ վարում է պաշտոնական փաստաթղթերի փոխանակում և նամակագրություն:

Իրականացնում է սեմինարների, կլոր սեղանների, կոնֆերանսների, գիտաժողովների, նպատակային և լրացուցիչ պատրաստման և վերապատրաստման դասընթացների և այլ խնդիրների վերաբերյալ խորհրդատվական ու այլ միջոցառումների կազմակերպում, իրականացնում է համապատասխան դասընթացներ և այլ ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցություն:

ԳԱԱ-ում սովորող օտարերկրյա և սփյուռքահայ քաղաքացիների վերաբերյալ տվյալներ է տրամադրում ՀՀ ԿԳ և ԱԳ նախարարություններին, Երևանում գործող օտարերկրյա դեսպանատներին և այլ իրավասու մարմիններին:

- Ապահովում է տեղեկատվական համագործակցությունը և մշտական կապը Կենտրոնի և արտասահմանյան գործընկերների միջև:

#### **4. Արդյունավետության գնահատման մեխանիզմներ և Գործիքներ**

1. Կնքված հուշագրերի , համաձայնագրերի գործնական կիրառում և միջոցառումների թեմատիկ վերլուծություն
2. Ուսանող/ շրջանավարտ – բուհ- գործատու գործող կապի ապահովում
3. Իրականացված ծրագրերի և միջոցառումների մասին նկարագրեր և հաշվետվություններ
4. Տարատեսակ ներբուհական և արտաբուհական միջոցառումների ՊԴ կազմի մասնակցություն
5. Միջոցառումների անցակցման և կազմակերպման վերաբերյալ ամենամյա հաշվետվություն
6. Անհրաժեշտ նյութերի ընտրություն և խմբագրում
7. Էլ. հավաքածուների ստեղծում համակարգչով
8. Ծրագրային ապահովում
9. Նոր պայմանագրերի կնքում
10. Գործունեության տարեկան վերլուծություն և հաշվետվություն
11. Քննարկում կառավարման մարմիններում
12. Անհրաժեշտ քննարկումների և հանդիպումների մասին արձանագրություններ

13. Տարբեր շահառուների և շահակից խմբերի ներգրավվածության աստիճանի որոշում
14. Ֆոկուս-խմբային քննարկումներ